

ԲՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ

Պոլսոյ իւրոյ հ համար 12 Յ
Տարեկան 12 Յ
Կրթական 6
Սրբապատկանի 8
Սրբապատկանի 8
Սրբապատկանի 15

Սրբապատկանի համար 3
Սրբապատկանի 1.50

Սրբապատկանի համար 40
Սրբապատկանի համար 20
Սրբապատկանի համար 20

Սրբապատկանի համար 10 սակերի

ՇԱՐՄԻՆ

ՄԱՐԿԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՄԻՆ ՕՐԵՐԸ

Նախկին և զորակ զրկել
հսկողութեան հաս-
ցիկն

Редация на въ Варна
Издатель
Варна

Redaction du jour :)

"Chir-jem"

Varna (Bulgaria)

Սրբապատկանի համար

Սրբապատկանի համար

Սրբապատկանի համար

15 ՄԱՐԿԻՆ

Գրողներ և չեն տրուիր

ՇԱՐՄԻՆՆԵՐ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՎ ԿԱՆԵՒԻՎ ՎՃԱՐԸ

ԼԱՐԱՄԱՂԱՑԸ

Պոլսոյ մամուլը բոլորովին լր-
նում է Պատերազմի և Սուլթանի
լրբութեան մասին: Եւ ի՞նչ կա-
րող է անել այդ խեղճ, կաշ-
կանդիված մամուլը:

Օրմանեանը հայ հոգեւորակա-
նութեան վատութեան ու ստո-
րութեան այդ մարմնացումը, իր
լարսալացի վերջին խոստումը
կատարելուց յետոյ՝ կրկին գնաց
բաղնից այն աթոռի վրայ, ուր
նստող միակ պարտականութիւնն
է հա ժողովրդի շահերը պաշտ-
պանել: Օրմանեան շատ լաւ գի-
տի իր այդ պարտականութիւնը և
գիտակցաբար պարտաւանջ է
գտնվում դէպի իրեն հօտը:

Ի՞նչ պէտք է անել այդ պար-
տաւանջ և վատ հոգեւոր պետի
հետ: Արտասահմանի եկեղեցի-
ները մէջ վալուց է որ չէ յիշ-
վում այդ աղբային շահերին դա-
ւածանդի անունը: Հիմա ի՞նչ
կարող է անել արտասահմանի
հայութիւնը այդ մեծ ոճրագոր-
ծին, ոչինչ:

Մի կողմից մենք շատ ուրախ
ենք որ Օրմանեան այս անգամ էլ
խաբուց հայ ժողովրդին: մեզ հա-
մար ցանկալի է որ Օրմանեան-
ները միշտ խաբաբայ լինեն որ-
պէսզէի հայ ժողովուրդը փորձով,
դառն փորձերով միանգամ ընդ-
միշտ համոզվի այդ քածերի ազ-
գաղութեան մէջ և իր բոլոր
յոյսը դնի միայն և միայն յե-
ղափոխական մարմինները վրայ:
Իայց և տխուր ենք. տխուր, ու-
րովհետեւ մինչև օրս չը գտնվեց
մի ուժեղ ձեռք որ այդ լրբի
օձիքից բռնէր ու դուրս նետէր
Պատերազմի արանի գաւթից:

Մենք չենք կարծում որ պատ-
րիարքական գահը այնքան մուր-
տառոված լինէր, որչափ մուրտա-
ռեց Օրմանեանը. այդ գահից
այսօր միայն դարձահոտութիւն
է բուրում: ամեն հայ զինուորի
է մօտենում այդ գահին: Աւ Սուլ-
թան Համիտը միշտ աշխատում է
աւելի հոտեցնել. . . աւելի զըղ-

ւելի դարձնել մեր Պատրի-
արքարանը:

Մեր ժողովուրդը մի ժամանակ
յուզվում էր Աշգեանի դէմ. փոր-
ձեր էր անում նրան Պատրիար-
քարանից դուրս վաճառել. իսկ Օր-
մանեանին հանդուրժում է. բայց
Օրմանեանը հազար անգամ Աշգե-
անից վատ է. այնքան վատ որ
Աշգեանին մոռցնել տեսց:

ՎՍՊՊՕ

ԴԵՍԻՑ ԴԵՆԻՑ

Պրահայի արտաքուտա կրօ-
նական ընկերութիւնները որոշ-
ւած են ուրիշ երկիրներու մէջ
հաստատուիլ, ատոնցմէ մաս մը
ուզեց Զուրիցերիա ապաստա-
նիլ բայց Գաշնակցութեան
կառավարութիւնը մերժեց է.
մաս մը որոշեց է Յունաստա-
նի մէջ տեղաւորուիլ, հոն ալ յոյն
հոգեւորականութիւնը արգելք էր
հանդիսանայ: Ամեն երկիր կը
խորշի այդ ասորէն որ դարձու-
նի թացքի մէջ հարստահարած է
Ֆրանսական ժողովրդին հօգին
և սիրտը:

Մայն Ֆրանսական հոգեւո-
րականութիւնը չէ որ խորշանք
կը պատճառէ. ամեն երկիր իր
հոգեւորականութեան գծով է.
և օր մը պիտի գայ որ ամեն աշ-
խարհի մէջ աւելը պիտի առնեն
և աւանց ետեւէն ինչան:

Միսոյէ լուվաքիի նախագահու-
թեամբը գոյութիւն ունեցող
Մակեդոնական Բ. կոմիտէի կա-
րեւոր անդամներէն մէկ քանին
ձերբակալուած են: Կառավարու-
թիւնը ինչ ինչ քաղաքական պատ-
ճառներով այդ կոմիտէին գոյու-
թիւնը Պուլկարիոյ համար զու-
սակար կը նկատէ և անոր գոյու-
թեան վերջ կուզէ տալ: Պուլկար-
քանի մը թերթեր կը թնայրեն
որ Մակեդոնիոյ մէջ ներքին կու-
մակերպութիւնները զօրեղաց:

ուին հոն լուրջ ապստամբութիւն
մը բարձրացնելու համար, և կը
հաւատան որ ապստամբութիւնը
բարձրացած միջոցին Պուլկարի-
ոյ մէջ գտնուած յեղափոխական
և Մակեդոնացիներուն համակող-
տարրը ինքնաբերաբար պիտի
վազէ իր կուռող և զբարձրեցու-
ն օգնելու:

Կովկասի մէջ գտնուող հայ գաղ-
թականներուն խնդիրը սուր կեր-
պարանք առած է. «նարժուհի»
ժամանակին բառական մանրա-
մասն տեղեկութիւններ տուաւ
այդ մասին: Գաղթականներէն
մեծ մաս մը չի ուզեր ռուսական
հպատակութիւնը ընդունիլ և ա-
ռանց անցաքրի, ինչպէս կը պատ-
մեն. հրացան մը առնելով երկիր
կանցնի: Թուրք կառավարու-
թիւնը սահմանադրուի վրայ մեծ
քանակութեամբ զօրք հաւաքեց
է. ինչպէս կերբեք ներս մտնող
գաղթականներուն արգելք հան-
դիսանալու համար:

ԿԷՑ

ԱՅՈՒՆ ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ՀՐԴԵՐԸ ԵՒ ԹՈՒՐԿ ՏԱՐԸ ՀՐԴԵՆԻՆ ՀԱՆԴԷՊ

Օգոստոս 15/28, չորեքշաբթի դիւն-
թաւը 9ին (Ը. Ե) հրդեհ մը կը ծագի
Ա. Գարահիսարի մէջ և կը սեւեւ աւ-
րողջ 30 ժամ, 2000ի մաս տուններ և
խանութներ կայրին. հայոց բոլոր
բնակարանները այսօր են 1200 տու-
նի չափ նոյնպէս երկու եկեղեցի և
վարժարան, Իսթանբուլ քաղաքի
սը կը հաւուրի 4,500,000 ֆրանք. և
այս գումարին մէջ բոլոր ապահովագ-
րական ընկերութեանց գումարը առ
առաւելն 120,000 ֆրանք կը հասնի:
գումար մը զոր ամբողջ վնասներուն
հարիւրին 3 չի համապատասխանը:
Մենք ամենաստույգ աղբիւրն է կի-
մանանք թէ հրդեհը սկիզբ կառնէ
Երիւնան անուով հայու մը տունէն.
բայց տակուին ստուգուած չէ թէ
կանխամտածութեամբ եղած է թէ
զիպուածով: բայց աս զիտելի պարա-
զան կայ որ թէ պաշտօնական կա-
ռավարութիւնը սրտովն ուզէր, ան-

միջականօրէն աղետին առջեւը կառ-
նը: Այս պարագան հաստատող շատ
մը զրոյցներ կը շրջին բերանէ բերան.
նոյն իսկ կը հաւատան թէ թուրքե-
րը կանխամտածութեամբ ըրած են
հրդեհը, որովհետեւ թուրք և հայ
տարրը իրարու հանդէպ վերջերս վեր-
ջին ծայր տեղութեամբ լցուած են:
Հրդեհը կանխամտածութեամբ «թուր-
քերու կողմէն» ձգուած ըլլալը վերա-
պահութեամբ կը հազարաքանք ճար-
ժութիւն: Բայց պաշտօնական կառա-
վարութեան հրդեհին առջեւը դիտ-
մամբ շտանդուն, զրուսոր փաստեր
ձեռք բերած ենք. և որոց ամենա-
կարեւորներէն մին է. սեղոյս Գա-
սապալի երկաթուղոյ տնօրէնին մաս-
նաւոր զրկուած հետազոտը, զոր Ա.
Գարահիսարի երկաթուղոյ տնօրէնը,
օգոստոս 15/28 թիւով կը զրկէ. ահա-
ւասիկ նոյն հետազոտին հայերէն բառ
առ բառ թարգմանութիւնը «հրդեհը
սարսափելիօրէն իր աւերումները կը
զործէ հայոց տուններ ամբողջ վտան-
գի ներքեւէն. իսկ կառավարութիւնը
և թուրք տարրը ծալապատիկ նստած
անտարբեր կերպով աղետքը կը դի-
տեն:

Եւ այս հետազոտին իմաստն ինչ-
պէս չ'եղբակցնել թէ հրդեհը կան-
խամտածութեամբ թուրքերուն կող-
մէն սարքուած է. նա մանաւանդ
հեռազիրը ընողը օտարազգի է և հե-
ռազիրը ստացողը քրտնալի է. եր-
կաթուղիի վարչութեան բնագահուր
Տնօրէն Մ. Կոտէնը, վտանգելի և մար-
դասէր անձ մըն է, որ հրդեհին օրէն
սկեսալ ցարդ օրական 1000 օխա հաց
կը զրկէ արկածեալ հայերուն. եր-
կաթուղիի պաշտօնից խնայողական
սնտուկէն, 40 հատ վակոն արկած-
եալներու տրամադրութեան տակ կը
դնէ իրբու օրասպարան ծառայու-
ն և միեւնոյն ժամանակ կը յայտարարէ
թէ արկածեալներուն արուած նպասա-
նէրը ձրի պիտի փոխադրէ ինչեւ
Գարահիսար:

Ա. Գարահիսարի հայերը լստ բա-
ւականին բարեկեցիկ և վաճառա-
կանական ասպարեզին մէջ որոշ և
ուրոյն տեղ մը գրաւած էին և
վերջին աղետներէն զերծ ըլլալով բո-
լորովին թուրք տարրին ուշադրու-
թիւնը իր վրայ կը դրաւէ. . . եւ այ-
սօր 10000 հայեր անպատուար մընա-
ցած, բոլորովին զրկուած լր տու-
նէն եւ գոյքէն կապասէ արտաքին
օգնութեան. ահա այս է ամբողջ
տաճկանայերի դրութիւնը. երբ հայու
ձեռքը իր բերանին կը հասնի եր-
բէք թուրքին աչքէն: ը վրայի որ
անմիջապէս դատարարութիւն մըն է
կը սարքէ ըլլայ գաղտնապէս կամ բա-

ցարձակ կը բաւէ որ իր նպատակին հասնի... Գարահիսարի հայերը թէպէտ եւ թրքախոս բայց իրենց զաւակները կը ջանային զուտ հայկական կրթութիւնով կրթել եւ վերջին տարիներս զգալի յառաջգիտութիւններ բերած էին ինչպէս կը նկարագրէր վերջերս բարեկամներէս մին որ տարւոյն մի քանի ամիսը Գարահիսարի մէջ կանցնէ իր գործերուն բերումովը. նոյնպէս կը հասաստէ ինձ բարեկամ թէ կրթական գործը ամուր հիմերու վրայ զնելու գիտումով Գարահիսարցիին կը ջանար տարուէ տարի դպրոցին պիտաճէն յարձրացնել. եւ այս տարի 4000 օսմ. սահի ծախսելով, լաւ եւ գեղեցիկ բաղանիք մը շինած են որուն եկամուտը պիտի յատկացուէր տեղւոյն երկսեռ մանկապարտէզին, որուն սաները կը բաղկանան 400-450 շափ աղջիկներէ եւ տղաքներէ. ու այս բոլոր ծրարագիրները, գաղաբարները կանհետանան տիրոջ ընտելին բարբարոսութեան հետեւածօք. եւ հայ տարրը որ մի քանի օր յառաջ նիւթական բարեկեցիկ եւ նախանձելի զիրք մը ունէր այսօր յետին ծայր թշուառութեան մասնուած է:

Եւ թող մեր շովինիները արտասահմանի մէջ սփռվա՞ն թէ յեղափոխութիւնը կամ յեղափոխականներն են հայ ժողովրդին վերջին աղէտքներուն բուն պատճառը. մինչդեռ Գարահիսարցիին տակաւին հայ յեղափոխական գոյութեան վրայ երբէք գաղափար չունէր ցարդ:

Գարահիսար իր երկաթուղիներով շատ մը հաղորդակցութեան զիւրու-թիւններ ունէր, եւ կառավարութիւնը եթէ ոչէր կրնար իր դրացի քաղաքներէն ջրհանկիրներ օգնու-

թեան փութացնել հեռագրով, Իզմիրէն էքսպրէս կրնար 5 կէս ժամէն ջրհանկիրներու խումբ մը լեցնել Գարահիսար որոնք նոյն իսկ կարող էին առանց ջուրի հրդեհին առաջը առնել կարելի եղածին չափ շուտ:

Միր Կարօ

Իզմիր, 13 օգոստ.

Յ. Գ. Թուէս քանի մը օր յառաջ 30ի շափ երկամասրոյ թիւրքեր Պոլսէն տեղս բերին շղթայակապ և այտեղէն ուղարկեցին Աթիա և Պոտուրուսի բերդերը, աքտրականներուն տարագնէրէն կը հասկցուէր թէ բոլորն ալ բարեկեցիկ դասուն կը պատկանէին:

Մ. Կ

ՎԵՍԵՆՈ ԽՈՒՄԲԸ

Քայլաքայլ մէջ լուր տարածուած է որ «Վեսենօ» խմբին մէջ անհամաձայնութիւններ կան ու շուտով այդ խումբը երկու մասի պիտի բաժնուի: Որչափ որ կըրցանք ստուգել, այդ լուրը ճիշդ է. «Վեսենօ» մէջ տիրող անհամաձայնութիւնները շատ սուր կերպարանք առած են, և սէզօնը վերջանալուն պէս բաժանուած տեղի պիտի ունենայ:

«Վեսենօ» իր 7 ամենայն գոյութեան մէջ, միայն վերջին երկու տարիներն է որ դեբասանական խմբի կերպարանքը առնել սկսեց և անոր յառաջադիմութիւնը ու օգտակարութիւնը

ապագայի մէջ էր որ պիտի տեսնայինք, բայց ահա «Վեսենօ»-ի այդ ապագան խորտակուելու վերայ է, կամ դրականապէս պիտի խորտակուի:

Գերասանական խմբի մը գոյութիւնը Պոլլարահայ գաղութի համար անհրաժեշտ է. միակ և լաւ կազմուած համաստ խումբ մը պիտի կարենայ թէ ժողովրդին և թէ իրեն համար օգտակար ըլլալ և այդ գերը վիճակուած էր «Վեսենօ»-ին, սակայն այդ խմբին անդամները իրենք կուզան խորտակուել այն, զոր ստեղծելու և պահպանելու համար այնքան ճիգեր թափած են և այնքան սիրաւորած են:

Խմբին սիւները եղած երկու անդամներուն, Պոպոպանի և Պէնիլիանի վրայ մեծ պարտականութիւն մը կայ. որոնք պիտի ամեն ճիգ թափեն համաձայնութիւն մը առաջ բերելու խումբը կործանուէն ապառքուելու համար: Տարիներով միասին գործած, տարիներով ամեն խոչնդոտներու գիմագրաւած այդ երկու կարեւոր ուժերը պիտի աշխատին ոչ միայն խումբին ամբողջութիւնը պահպանել այս եւ այն աւելի բարձր գիրքի մը հասցնել, որովհետեւ առանք իրարմէ բաժնուելով առանձին առանձին բան մը չը պիտի կրնան ընել ոչ հասարակութեան եւ ոչ ալ իրենց համար:

Արդէն միասին ելած միջոցնուն շատ ալ ուժեղ խումբ մը չէին ներկայացնէր, իսկ զատուելով իրեն աւելի թոյլ և աւելի աննշան պիտի ըլլան ու պիտի զըրկուին հասարակութեան քաջալեբութեանէն:

Խորհուրդ, բարեկամական խորհուրդ կուտանք «Վեսենօ»-ի անգամներուն փոխադարձ զիջումներ ընել, վազ անցնել ցնորքներէ, պահպանել իրենց խմբին ամբողջութիւնը զայն մտքովով տնչնորքներէն:

Թատրաստի մը

ՊՕԵՐ ԶՕՐԱՎԱՐՆԵՐԸ

Տուէտ, Տէլարէյ, և Պօլիա դօրաւարները Լօնտօնի մէջ կ'սպասեն Ձէմպրէնի գալստեան որ պէտքի իրենց առաջարկութիւնները ընեն. այսինքն աւելի մեծ գրամական օգնութիւն ինչդեռ Անգլիայէ պօէր ընտանիքներուն օգնելու և շուտով երեսփոխանական վարչութիւն մը հիմնել տան երկու նախկին հասարակապետութիւններուն համար: Զօրավարները հինգ միլիօն անգլիական ոսկի հոյզն անգլիական կառավարութեանէն:

Ն. Յ. Բրէս. թերթին ըսելով վր Անգլիոյ թագաւորը իր կողմէն համաձայն է որ պօէր զօրավար-

ԲԱՆՄՍԻՐԱԿԱՆ

ՎԵՐԱԾԻՆ

ՄԱՍ Բ. ԳԼՈՒԽ Ա.

— Հայրդ, Հեղինէին շատ սիրում է. տարկեց մայրը, ես էլ եմ սիրում, բոլորս էլ սիրում ենք: Բայց Հեղինէին ուզածը մի տարօրինակ բան է. մեր կեանքի մէջ շատ անսովոր քանի անգամ փորձեցի չօրդ համոզել, դեռ անցեալ օր էր. բայց այնպէս բարկացաւ, որ ասել չեմ կարող. դեռ չօրդ այդչափ բարկացած չէի տեսել:

— Բարկացաւ, ի՞նչի բարկացաւ, բարկանալու ի՞նչ կայ. աշխարհը փոխվել է. մի մտազէք որ դուք ութսուն տարեկան, գրեթէ մի դար ապրած մարդիկ էք. իսկ մի դարում շատ բան է փոխվում: Հեղինէն հիմա ձեր ուզած ձեւով չի կարող ամուսնանալ:

Տարօրինակ մարդիկ էք դուք. ձեր գուլակներին կրթում էք. նրան ծանօթացնել էք տալիս ուրիշ կեանքի հետ, ստիպում էք սիրել այդ նոր կեանքը, ձեր տան մէջ ապրել այդ նոր կեանքի պահանջներին համաձայն և յանկարծ, ամենակարեւոր վայրկեանում, ասում էք—կանգնիր, այդպէս չի կարելի. դու էլ պէտք է նոյն ձեւով ամուսնի ընտրես, ինչ ձեւով մենք ենք ընտրել: Հեղինէն հակասութեան մէջ չի գտնվում. հակասութեան մէջ դուք էք գտնվում:

— Ինչե՞ր ես ասում աղջի. ուրեմն

մենք մեղաւոր ենք որ մեր աղջիկներին ուսում ենք տալիս. ամեն ծնողք էլ տալիս է. բայց նրանց աղջիկները այդ տեսակ յիմարութիւններ չեն անում. Ո՛ւր է, հոյց տուր, մեր քաղաքի որ ուսում առած աղջիկը ուզեց Մաղիկեանի պէս մի աղայի հետ ամուսնանալ. նրանց ամենքի աչքն էլ բռնվի, փոստատարանի, պաշտօնեայի վրա է. ուսում առնելը չի նշանակում աշխարհից ձեռք քաշել և գլուխը անոնել հանդիպած մարդի հետ լքելու անախարհի որ անկիւնը երթալ:

— Այո մայրիկ, ուսում առնելը նշանակում է ազատ մարդ դառնալ. և ու՛ր որ ուսումը մօզայի և զարդի համար չէ առնում. նա ազատ մարդ է դառնում:

Տեսնում են, Հեղինէն զարդեր չի սիրում, մօզայի չի հետեւում, ամեն պատահած մարդի առջեւ դաշնակ չի անում չի երգում, որպէսզի իր հօնարները ցոյց տայ և մարդ գրաւի:

— Երանի թէ այդպէս լինէր. հիմա մենք էլ այդ դաւերի մէջ չկենք իրենի Հեղինէն ինձ հետ բոլորովին չի խօսում. չը գիտեմ ի՞նչ անեմ, դու լուխ ո՞ր քարին տամ, էլի դու կարող ես նրան բան հասկացնել: Տես, կարող ես համոզել. ասա որ մայրիկը քեզ ուզում է Մ. սկզբն առնի իր հետը: Կարելի է սիրար բայցի:

— Կասեմ մայրիկ. կայտատեմ համոզել. այդ լաւ ես մտածել. բայց ի՞նչպէս պէտք է երթամ. հայրս կը թողի:

— Հօրդ համոզել եմ որ ինձ բռնկելու զրկի. Հեղինէին հետս կը տա-

նեմ, սիրտը բացվելու համար. Տես նենք, կարելի է Աստուած մի գուռ բաց անի:

Մայրը գիտի սօքը չէր վերջացրել, երբ Հեղինէն սենեակ մտաւ. նրա գէմքի արտայայտութիւնը բոլորովին փոխված էր. թախիծի հեռքը անգամ չէր մնացել. աչքերը վաւոճում էին. ամբողջ էութեամբ ուրախութիւն, երջանկութիւն էր արտայայտում. Մայրն ու քոյրը խօսքերը կարելով զարմացած նայեցին կերպարանափոխված Հեղինէին վրա:

— Ի՞նչ էք այդպէս աղչած նայում:

— Շատ ուրախ ես երեսում, Հեղինէն. դու համար ենք զարմացած նայում. Գանի ժամանակ է որ քո գէմքը այդպիսի մի արտայայտութիւն չի ունեցել: Ի՞նչ է պատահել. ի՞նչ ուրախ լուր ունես:

— Այո մայրիկ. ոգեւորված պատասխանեց Հեղինէն, շատ ուրախ եմ. որովհետեւ Մաղիկեանից նամակ ստացայ. շատ ուրախ եմ, որովհետեւ նա ողջ և առողջ է. ու դեռ ինձ սիրում է. և միշտ պէտք է սիրի:

— Ինչե՞ր ես ասում աղջիկ, չե՞ս ամուսնու. սրբիտյից նամակ ես ստացել և մօրդ առաջ պարծենում ես:

— Ոչ մայրիկ, չեմ ամուսնու. ի՞նչ չեմ ամուսնու. սրտիս սրբածի մասին եմ խօսում. ոչ թէ քո, կամ հօրս, կամ թէ միջնորդի գլխիս կապած նշանածի. Ո՞վ ասաց քեզ որ սիրած աղամարդի մասին խօսելը, այն էլ մօր հետ, ամօթ է. Եթէ մօրս ու քոյրս հետ չը խօսեմ իմ ուրախութեան մասին, հապա ո՞ւմ հետ խօսեմ:

Թողք մայրիկ. ձեր ասածները էլ իմ գլուխը չեն մտնի, ես երեխայ չեմ. Ձէ մարիս լրանում է. եթէ այդ մարդ լինէի հիմա մի մեծ գործի գլուխ կանգնած կը լինէի:

— Բայց այդ մարդ չես Հեղինէ, աղջիկ ևս. սղջկայ պէս պէտք է պահես քեզ:

— Եւ աղջկայ պէս էլ պահում է՞մ ինձ. բոլորովին Աստուած պատաւէրին հետեւելով, է՛հ, մայրիկ. հիմա ուրստե՛հ եմս պատճառը իմացար. հայրիկիս էլ իմաց տուր, որ այս օր ուրախ եմ. չէ որ ամենքդ էլ ախուր էիք իմ ախուր լինելու պատճառով. սյուր ևս ուրախ եմ, ուրեմն բոլորդ էլ ուրախացէք. իսկ եթէ դուք չէք ուրախանալ. ես թէ իմ և թէ բոլորիդ փոխարէն կուրախանամ:

Հեղինէն խօսքը վերջացնելով ուրստ ուրախ դուրս գնաց սենեակից: Մայրը բերանը բաց արած մի երկու վայրկեան աչքերը Հեղինէին դուրս գնացած դրան ուղղած մտաց եւ իստի դառնալով մեծ աղջկան ասեց.

— Տես, տես մեր աղաչանքները, մեր յորդորանքները մեր խանդավառանքը բոլորը գուր անցան, բայց այն անպիտանի մի կտոր թուղթը մի րոպէում կերպարանափոխեց նրան:

— Այո մայրիկ, այդպէս է աշխարհի օրէնքը. եւ այդ օրէնքը շատ բերական ու շատ արդարացի է: Հեղինէին համար այժմ գոյութիւն ունի միայն Մաղիկեանը. եւ ես շատ եմ նախանձում Հեղինէին. Երանի նըրան:

(Շարունակելի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Բ Ք Ի Ս

Սեպտեմբեր 4 (ն. Տ.) Պոլսէն «Թան» կը հեռագրեն որ հայոց պատրիարքին խոստացուած սուլթանական իրաւունքն զեռ հրատարակուած չէ ։ Հայերը շատ բարկացած են Օրմանեանի վրայ յայտարարելով որ ան Սուլթանի հետ զաւանսպէս համաձայնելով զիրենք խաբեց ։ Օրմանեանէն կը պահանջեն որ վերջնապէս հրատարի և վանք մը քաշուի ։

Յոյն պատրիարքը շրջաբերականով բոլոր առաջնորդներուն կը հրամայէ խիստ միջոցներ ձեռք առնել կաթոլիկ զբարոյններուն դէմ և ծնողներուն կը պատուիրէ երբեք իրենց զաւակները կաթոլիկ դպրոցներ չը գրկեն ։

Ռուսիան Միթրոպոլիտի համար հիւպատոս մը նշանակել է ։ Բայց ալպանացիները յայտարարած են թէ երբեք չը պիտի թողնեն որ նոր հիւպատոսը հոն հաստատուի ։ Ալպանացիները ուզել են սպաննել նոր հիւպատոսին գաւազները որոնք հիւպատոսին իրեզնէները կը բերեն եղբոր թուրք իշխանութիւնը հազիւ կրցեր է գաղաղները ապստել ։

Հիմա Լեւոս թուրք կառավարութեան խիստ դիմում ըրեր է և յայտարարեր է որ Ալպանացիներու այդ վարմունքը թուրք իշխանութեանց թուրքերուն նշան կը նկատէ ։

Պ Ո Ւ Կ Ա Ր Ի Ս

Սօֆիայի մէջ պատգամաւորութիւն մը գիմեր է ներքին դոր ծոց նախարարին և պահանջեր է որ ձերբակալուած զօրավար Յոնչէվ և զնորպետ Նիքոլօֆ ալատարձակուին ։ Նախարարը որոշ պատասխան մը չէ տուեր ։ Կըսեն պուլկար թերթերը ։

Ռ Ո Ւ Ս Ի Ս

Սեպտեմբեր 2ին Գիէֆի բանտէն 11 քաղաքական յանցաւորներ փախեր են ։ Կէսօրեայ զբօսանքի ատեն փախտականները իրենց պահուպաններուն զխուռն ծածկոցներ ձգեցին ։ և գրտէն նեոուած չուան մը բռնելով արագութեամբ բանտի պատէն վար են իջեր ։ ու անյայտացեր մին շեռ օրս եղած փնտառութեանը պարզ իւն անցեր են ։ Կառավարութիւնը մեծ կարեւորութիւն կուտայ փախտականներու ձերբակալմանը ։

Ս Ւ Ս Ր Ի Ս

Վերջին օրերս Վիէնայի մէջ ամեն օր նախարարական խորհրդակցութիւններ տեղի կունենան որոնք մէջ բուռն կերպով կը ծեծուի համակերպումի խնդիրը ։ Վարչապետ Կէօրպէր Պոտտերը զայցեր է Հունգարիոյ վարչութեան հետ այդ մասին խորհրդակցելու ։ Հոն ալ խորհրդակցութիւնները յաջող կերպով կընթան ։

Ս Ր Պ Ի Ս

Պելկրատի մէջ պետական խորհրդի նախագահ Կէօրպէր Սիմիչի նախագահութեամբ հակախրդատական մեծ միթիւնկ մը տեղի ունեցեր է ։ Միթիւնկը որոշումով մը զատապարտեր է Ջակրէպի մէջ տեղի ունեցած հակասրբական ցոյցերը ։

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ս

Արեւելասէրներու 13րդ գօնկրէն սկսեր է իր նիստերը Համպուրկի մէջ ։ Կօնուէրներու սրահին մէջ բարի գալուստի նրբկայծ մը տրուեր է ժողովականներուն ։

Վիլհելմ կայսրը Բոլշէնի մէջ ճառ մը արտասաներ է ։ որոնք մէջ գէպի լեհերը ատելութեան և բարկութեան շեշտ չըկայ ։ այլ ըրդ հակառակը աւելի բարեկամական սրամտորութիւններ և զգացումներ ։

Յ Ր Ա Ն Ս Ս

Աման քաղաքի մէջ 1870—71 թւական պատերազմին մէջ ինկած զինուորներուն յիշատակին կանգնելիք արձանի բացման հանդէսի միջոցին պատերազմական նախարար զօրավար Անտրէ իր ճառին մէջ յայտարարած է որ օտա ները թող չը կարծեն թէ Ֆրանսացիները իրարու հետ չեն համաձայնիր վտանգաւոր վայրկեաններու մէջ ։ որովհետեւ միշտ վէճի մէջ են ։ Պէտք եղած պարագային Ֆրանսացիները միշտ անպացուցած են որ կրնան միահամուռ կերպով թշնամիներու դէմ բրթար ։

Ա Ն Գ Լ Ի Ս

Պօէր զօրավարները կը փափակին որ իրենց խորհրդակցութիւններուն մասնակցի նաև Լօրտ Քիչնէր ։

Պ Ե Լ Ժ Գ Ս

Գերմանական թերթերը կիսանան որ Պրիւքսէլի Վէնէրական ախտերու միջազգային գօնկրէի մէջ միաձայն կարծիք չայտնուած է դատական միջոցով հալածել զանոնք որոնք իրենց հիւանդութիւնները կը թաղցնեն առողջապահութեան վրայ հսկող իշխանութիւններէն և այդպէսով այդ հիւանդութիւնները կը տարածեն ։

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Ա Լ

Մէկ քանի օրէն Նախկին նախագահ Քրիկէրի յիշատակները ամբողջութեամբ պիտի հրատարակուին Միւնիխի մէջ ։

Ամբողջ աշխարհի մեծ հրատարակիչներէն 40ը միջոց կատարեցին հոչակաւոր նախագահին յիշատակները հրատարակելու համար ։ Միւնիխի Լէքման հրատարակչական տունը նախամեծութիւնը շահեցու ։

Ս Մ Ե Ր Ի Կ Ս

Ելէքտրական թրանսմիսի մը հանդիպելով նախագահ Ռօզուէլթի կառքին ։ կառքը ջարդ ու փշուր ըրեր է ։ նախագահը թեթեւ վէրքերով աղատուէր է ։ Իսկ քովիններէն մէկ երկուքը մեռեր և վիրաւորուեր են ։

Չ Ի Ն Ա Ս Ս Ա Ն

Բանթօնի մէջ պօքսէրները կոչ մը հրատարակել են ։ որով Չինացիները կը հրաւիրուին օտարականները կոտորելու ։ Այդ ցոյցին շարժառիթը կը համարուի Բանթօն—Հանքովի երկաթուղիի գծին շինութեան սկսումը և այն միջոցները որոնք պետութիւնները ձեռք առած են Չինաստանի պատերազմական տուգանքին վճարումը ապահովելու համար ։

Ա Ձ Դ

Եւրոպական լեզուներու և պոետական մասնաւոր դասեր կուտայ իր ուսումը Եւրոպա ստացած և նորերս Չուրիցիայէն վերադարձած Լիւսա Անի խանէսեց

Դաշնակի ։ Չուրիցի և երգի դասեր կուտայ

Նարսե Անի խանէսեց

Պայքանակա փողոց թիւ 8 ։ Վանա ։

Յ Ն Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն

Սկսու հրատարակուի Ֆրանսայի նշանաւոր վիպասաններէն Լուի Բուսոն

«ԱՆՆՅԵՆԼ ՊԱՆՆՈՒԸ»

Գերազանցապէս հետաքրքրաշարժ Ամէն դասակարգի դիւրամտելի ըլլալու համար զիրքը երկու մասով երեսան պիտի ելլայ ։ Եկ հատորի մէջ և ամբողջութեամբ 52-54 թերթերէ պիտի բաղկանայ ։

Իւրաքանչիւր մասին բաժանորդագրին է Վանայի համար 1 25 ։ ուրիշ քաղաքներու և արտասահմանի 4 50 ։ Իսկ ամբողջութեամբ բաժնեգրին է ։ Վանայի համար 2 50 ։ և Վանայէ դուրս 3 ֆր. ձեռքէ առնողները պիտի վճարեն առաջուան պէս 8 երեսնոց պրակին 5 սանթիմ ։

Սմէն քաղաքները և կամ գիւղերը ուր մէկէ աւելի բաժանորդ ունինք ։ միայն մէկ հասցէի ամէն շարքի երկու պրակը մէկ ծրարով պիտի գրկուի ։ Իսկ առանձին բաժանորդի պրակները 6 հարց մէկ ծրարով պիտի գրկուի ։ փոսթի ծախքը հրատարակչին վրայ է ։ Փոփաքողները պէտք է դիմեն հետեւեալ հասցէին ։

Տպարան «Արեւելեան»

Օճեկի Բարսեղիան

Վառնա պողկարխու

Դրամի փոխարէն Լուիսիայոյ ալ կընդունուի ։

Ա Ն Ո Ւ Շ Ս Ի Ս Ա Ն

Հ Ա Յ Ի Հ Ա Ս Ա Ր

կամ

Ա Լ Ջ Կ Ա Ն Ի Ը Յ Ե Տ Ա Ս Կ Ա Ր Ն Ը

Վէպ մը իրական կեանքէ

Մամուլ տակ

Այս վէպը որ կը պարունակէ իր մէջ տեղական կեանքէ զանազան պատկերներ ։ հրատարակութեան Բանտուած է հեղինակին կողմէն և սիրով պիտի ընդունուին բաժանորդները հրատարակութեան դիւրութիւն ընծայուելու համար ։

Բաժնեգրին է 1 ֆրանք ։ բոլոր ծախքը հրատարակչին վրայ ։

Տպագրութիւնը աւարտուելու գրքերը կը յանձնուին բաժանորդներուն Գոյանալիք հասցիով ամբողջովին կը նուիրուի «Հայկական կարմիր խաչ» ընկերութեան ։

Բաժանորդագրութեան համար դիմել հետեւեալ հասցէին ։

Մուրատ Երանոսեան

(Պուլկարիա) ՎԱՌՆԱ

Յ Ո Ւ Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն

«ԲԱՐԿԷՆ ՍԻՆԷՆ» ընթերցարանի մէջ կը ծախուի Ատոմ Եարճանեանի «Ինչպե՞ս յօրէն» ի նպատակայ Ռասանողական Միութեան ։

Գինն է 1 լէֆ արծաթ ։

Կը ծախուի նաև «Ղարափի Ազատութեան շնորհակալութիւն» ։

Գինն է 90 սանթիմ Վանա

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Врагностъ“ Варна.